



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի  
գնումների առանձին գործարքների մոնիթորինգի անրոյունքները**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
1. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .....	4
2. «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-Ի «ՏՐԱՆՍԳԱԶ» ՍՊԸ-Ի ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ .....	4
3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՅ ԴԻՏԱՐԿՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ .....	7
4. «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-Ի «ՏՐԱՆՍԳԱԶ» ՍՊԸ-Ի ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .....	8

## ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով)՝ համաձայն 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի՝ իրականացրել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի (այսուհետև՝ ընկերություն) 2015 թվականի գնումների առանձին գործարքների մոնիթորինգ:

Մոնիթորինգն իրականացվել է ընկերության գնումների գործընթացի համապատասխանությունը հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին (այսուհետև՝ լրացուցիչ պահանջներ) գնահատելու նպատակով: Այդ նպատակով ընտրվել են 2015 թվականի ընթացքում իրականացված բոլոր մրցութային գործարքները, որոնք դիտարկվել են տարբեր տեսանկյուններից, մասնավորապես՝

- 1) ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության և գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության մոնիթորինգի,
- 2) մրցութային փաստաթղթերի մոնիթորինգի,
- 3) մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի,
- 4) գնման պայմանագրի և դրա կատարման մոնիթորինգի տեսանկյուններից:

Գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է՝ հիմնվելով ընկերության կողմից գնումների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող եռամսյակային հաշվետվությունների, գնումներին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև հանձնաժողովի աշխատակազմի կողմից կատարված դիտարկումների արդյունքների հիման վրա:

## 1. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի գնումների առանձին գործարքների ուսումնասիրության, դրանց իրականացման արդյունքում ընկերության կողմից հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքի պահպանման գնահատման նպատակով: Այս համատեքստում հարկ է նշել, որ հանձնաժողովի կողմից կարգավորվող ընկերությունների գնումների գործընթացի կարգավորման և դրա հետագա մոնիթորինգի նպատակը ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման նպատակով ծախսվող միջոցների արդյունավետության բարձրացումն է, քանի որ դրանք անմիջական ազդեցություն ունեն սակագների վրա: Այդ առումով առանցքային է գնումների բոլոր գործարքներում (անկախ ընտրված գնման ընթացակարգերից) հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքի ապահովմանը հասնելու ուղղությամբ ընկերության կողմից ձեռնարկված քայլերն ինչպես մինչև գնումների իրականացումը՝ դրանց պլանավորման փուլում, այնպես էլ իրականացման ընթացքում և արդեն իսկ ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ընդունման փուլերում:

Ընդհանուր առմամբ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի ընթացքում ի հայտ են եկել տարբեր բնույթի խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրն իր բացասական ազդեցությունն է թողել գնումների ընդհանուր արդյունավետության վրա:

## 2. «ԳԱԶՊՐՈՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-Ի «ՏՐԱՆՍԳԱԶ» ՍՊԸ-Ի ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ


«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ն 2015 թվականի ընթացքում իրականացրել է 1.3 մլրդ դրամի գնումներ (առանց ԱԱՀ): Գնումներն իրականացվել են ինչպես ապրանքների, այնպես էլ աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով: Ընդհանուր գնումների ծավալի 71%-ը (933,7 մլն դրամ) բաժին է ընկել ապրանքներին, իսկ 29%-ը (380,2 մլն դրամ)՝ աշխատանքներին և ծառայություններին: Գնումների իրականացման նպատակով ընկերության կողմից կիրառվել է երեք ընթացակարգ՝

- ✓ բաց առաջարկների հարցումով իրականացված գնումներ,
- ✓ միակ աղբյուրից իրականացված այլ գնումներ,
- ✓ մրցակցային շեմը (6.5 մլն. դրամ առանց ԱԱՀ) չգերազանցող գնումներ:

Ընկերության կողմից 2015 թվականին իրականացված գնումների ծավալի բաշխումը նշված ընթացակարգերի միջև ներկայացված է ստորև՝

#### ԳՐԱՖԻԿ 1


2015 թվականին փաստացի կատարված գնումների ծավալը ըստ ընթացակարգերի տիպերի



Ներկայացված գրաֆիկական պատկերը ցույց է տալիս, որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ն մրցակցային եղանակի կիրառմամբ իրականացրել է գնումների 12%-ը, իսկ ոչ մրցակցային եղանակի կիրառմամբ՝ 88%-ը:

Գնումների գործարքների բաշխումն ըստ ընթացակարգերի առավել մանրամասն դիտարկված է ստորև՝ ըստ առանձին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների:

2015 թվականին փաստացի կատարված գնումների ծավալն ըստ ընթացակարգերի՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դեպքում



Ինչպես տեսնում ենք վերոնշյալ գրաֆիկական պատկերից ապրանքների դեպքում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ն ոչ մրցակցային եղանակի կիրառմամբ իրականացրել է գնումների 61%-ը, իսկ մրցակցային եղանակով՝ 10%-ը, իսկ աշխատանքների և ծառայությունների դեպքում՝ ոչ մրցակցային եղանակով իրականացված գնումները կազմել են 27%, իսկ մրցակցային եղանակով՝ 2%:


Այս համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ ընկերության ակտիվները հիմնականում ձեռք են բերվում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից, որոնք այնուհետև հանձնվում են հավատարմագրային կառավարման «Տրանսգազ» ՍՊԸ-ին: Արդյունքում «Տրանսգազ» ՍՊԸ-ն հիմնականում իրականացնում է փոքրածավալ գնումներ, որոնք էլ իրականացվում են ոչ մրցակցային եղանակով:

### 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԴԻՏԱՐԿՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մոնիթորինգի իրականացման նպատակով ընկերության 2015 թվականի ընթացքում բաց ընթացակարգով իրականացված գործարքներից հանձնաժողովն առանձնացրել է բոլոր 3 առանձին գործարքները, որոնց հետ կապված մրցութային փաստաթղթերը հանձնաժողով են ներկայացվել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի 2016 թվականի ապրիլի 7-ի №01-16/240 գրությամբ: Հարկ է նշել, որ ընտրված 3 գործարքներից բոլորը հանդիսացել են մրցութային ընթացակարգով (բաց առաջարկների հարցումով) ապրանքների ձեռքբերման համար իրականացված գործարքներ:

Հանձնաժողովի կողմից 2015 թվականի համար ընտրված և դիտարկված գործարքների ընդհանուր արժեքը կազմել է 136,2 մլն դրամ՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից 2015 թվականի ընթացքում իրականացված 1,3 մլրդ դրամից: Այսինքն՝ հանձնաժողովի կողմից ուսումնասիրված գործարքները կազմել են ընկերության ընդհանուր գործարքների 10%-ը, իսկ մրցութային գործարքների՝ 85%-ը: Ստորև գրաֆիկական պատկերի տեսքով ներկայացված են դիտարկված գնումների գործարքների համամասնություններն ըստ ընթացակարգերի:

**ԳՐԱՖԻԿ 3**



Վերը նշված համամասնություններից կարելի է ենթադրել, որ իրականացված մոնիթորինգի արդյունքները բնութագրական են ընկերության բոլոր մրցութային գնումների համար:

#### 4. «ԳԱԶՊՐՈՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-Ի «ՏՐԱՆՍԳԱԶ» ՍՊԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մոնիթորինգի իրականացման հիմքը` ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված` հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

Մոնիթորինգի օբյեկտը` «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ:

Մոնիթորինգի նպատակը` «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը` 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ը:

Մոնիթորինգի մեթոդաբանությունը` «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

Մոնիթորինգի առարկան` «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից 2015 թվականի ընթացքում իրականացված գնումների թվով 3 առանձին գործարքներ:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ նշված գործարքներում «Տրանսգազ» ՍՊԸ-ն գնումների իրականացման ընթացակարգերը, ընդհանուր առմամբ, կազմակերպել է պատշաճ մակարդակով: Մասնավորապես`

1. Տնտեսական օպերատորի ընտրությունը կատարվել է ընկերության գնումների կարգին համապատասխան և հաղթող է ճանաչվել հրավերի պահանջները



բավարարող և մրցույթի շրջանակում տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը:

2. Գնման պայմանագրերը կատարվել են պատշաճ մակարդակով:
3. Սահմանվել են վճարման ողջամիտ ժամկետներ:

Միևնույն ժամանակ, մոնիթորինգի ընթացքում ի հայտ են եկել տարբեր բնույթի խնդիրներ, որոնք իրենց բացասական ազդեցությունն է թողել գնումների ընդհանուր արդյունավետության վրա: Մրցույթների կազմակերպման ընթացքում ի հայտ եկած հիմնական թերությունները ամփոփ ներկայացված են ստորև.

1. Ընկերությունը որոշ դեպքերում չի ներկայացրել մինչև մրցույթի անցկացումն իրականացված շուկայի ուսումնասիրության արդյունքները:

Համաձայն հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջների 7-րդ կետի՝ հանրային կազմակերպությունների գնումների կատարման ընթացակարգերը պետք է հիմնված լինեն գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքի ապահովման վրա: Անկախ որևէ հանգամանքից, մինչև գնումների իրականացումը հանրային կազմակերպությունները պետք է կատարեն շուկայի ուսումնասիրություններ և յուրաքանչյուր դեպքի համար հիմնավորեն գնումների ընթացակարգի ընտրությունը:

Անհրաժեշտ է փաստաթղթավորել շուկայի ուսումնասիրության գործընթացը և գնումները պատշաճ կազմակերպելու նպատակով սահմանել շուկայի ուսումնասիրության գործընթացը կարգավորող ներքին ընթացակարգ:

2. Ընկերությունը որոշ դեպքերում գնման ընթացակարգի փաստաթղթերը չի կազմել պատշաճ մակարդակով՝ խախտելով հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջների 6-րդ կետի 5-րդ ենթակետը, համաձայն որի, գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի, կամ արտադրողի, բացառությամբ այն դեպքերի, երբ գնման առարկայի բնութագրումն անհնար է առանց դրանց: Հղումներ կատարելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

3. Մրցույթներին տնտեսավարող սուբյեկտների մասնակցությունը հիմնականում չի գերազանցել մեկ մասնակիցը:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ առաջարկվում է հետագայում մրցույթներին առավել բարձր մասնակցությունն ապահովելու նպատակով մասնակցության հայտեր ուղարկել կամ տեղեկացնել բոլոր պոտենցիալ մասնակիցներին՝ չսահմանափակվելով մրցույթն ընկերության ինտերնետային կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելով:

4. Բոլոր դեպքերում մրցութային գնման մեթոդի ընտրությունը կանգ է առել բաց առաջարկների հարցման վրա: Համաձայն ընկերության գնումների կարգի՝ բաց առաջարկների հարցումով գնման դեպքում սահմանվում են հայտերի ներկայացման սեղմ ժամկետներ, ինչը մասնակից ընկերությունների մոտ առաջացնում է մրցույթի մասին իրազեկվածության խնդիր:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ առաջարկվում է մրցույթներին մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման նպատակով սահմանել հայտերի ներկայացման ողջամիտ ժամկետներ:

5. Ընկերությունը շատ գնման առարկաներ ձեռք է բերել միակ մատակարարից:

Ամփոփելով նշենք, որ անհրաժեշտ է հետևողական միջոցառումներ իրականացնել գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների պահպանման նպատակով: